ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1840-Ա « 16 » մայիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի Հ.1659-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով լ/ա Արթուր Սարգսյանի 06.05.2025թ. հ.Դ-48339-24 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2025 թվականի ապրիլի 30-ի «Երևանի քաղաքապետի 2025 թվականի ապրիլի 10-ի հ.1315-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և անշարժ գույքերին հասցեներ տրամադրելու մասին» հ.1659-Ա որոշման հավելվածի 7-րդ և 8-րդ կետերը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
16.05. 2025թ.
հ. 1840 -Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Ռոման Հայրապետյան /լիազորված անձ/ Ռաֆիկ Մխեյան	Հաղթանակ 5-րդ փողոց, հ.102ա	հողամաս	Հաղթանակ 5-րդ փողոցի հ.102ա հասցեում գտնվող հողամասին /հիմք՝ Երևանի քաղաքապետի 07.03.2025թ. հ.809-Ա որոշում/ տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 5-րդ փողոց, հ.104	01073YCVSRUK	
2	Աննա Աղաբեկյան /լիազորված անձ/ Ներսես Նալբանդյան	Հ. Քոչար փողոց, հ.27 շենք	ոչ բնակելի տարածք	Ներսես Նալբանդյանին սեփականության իրավունքով պատկանող, Հ. Քոչար փողոցի հ.27 շենքում գտնվող ոչ բնակելի տարածքին /վկ. հ.11042024-01-0171/ տրամադրել հասցե՝ Հրաչյա Քոչարի փողոց, հ.27 շենք, շինություն հ.53/1	01033XWBVQYX	
3	Արթուր Մարգարյան /լիազորված անձ/ Օհաննես Ստեփանյան և Սուսանա Նոեմի Սիրոյան	Այգեձորի փողոց, հ.8	բնակելի տուն	Օհաննես Ստեփանյանին և Սուսանա Նոեմի Սիրոյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Այգեձորի փողոցի հ.8 հասցեում գտնվող բնակելի տան /վկ. հ.26122019-01-0236, ընդ. բաժնային շինություն 30.9քմ և հող 162.6քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 108.96քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Այգեձորի փողոց, հ.8/2	010339VNKGXN	
4	Արթուր Մարգարյան /լիազորված անձ/ Օհաննես Ստեփանյան և Սուսանա Նոեմի Սիրոյան	Այգեձորի փողոց, հ.8	բնակելի տուն	Օհաննես Ստեփանյանին և Սուսանա Նոեմի Սիրոյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող, Այգեձորի փողոցի հ.8 հասցեում գտնվող բնակելի տան /վկ. հ.26122019-01-0236, ընդ. բաժնային շինություն 30.9քմ և հող 162.6քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 79.0քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Այգեձորի փողոց, հ.8/3	01033D4FHQN5	

5	Աստղիկ Հովհաննիսյան /լիազորված անձ/ Ալիլյա Ղազարյան	Նորքի 1-ին նրբանցք, հ.27	բնակելի տուն	Ալիլյա Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող, Նորքի 1-ին նրբանցքի հ.27 հասցեում գտնվող բնակելի տանը /վկ. հ.21042025-01-0341/ տրամադրել հասցե՝ Նորքի փողոց, 1-ին նրբանցք, հ.19/9	01093BJ6E9VB	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ